Հաստատում եմ
ՀՀ ԳԱԱ ՊԻ տնօրեն
Ա. Ա. Մելքոնյան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ռեգինա Ալեքսանի Գալուստյանի «Եվրոպական մտքի դերը «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գաղափարախոսության ձևավորման գործընթացում և դրա ազդեցությունը Հայոց ցեղասպանության վրա» պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ատենախոսության մասին

Հայոց ցեղասպանության կազմակերպման և իրագործման համար պատասխանատու Օսմանյան կայսրության իշխող քաղաքական ուժի՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցության, վերջինիս պանթուրքիստական գաղափարախոսությամբ առաջնորդվելու և այն որպես հայերին բնաջնջելու և հայրենազրկելու քաղաքականության հիմք դարձնելու վերաբերյալ անցած տասնամյակներում բավական աշխատություններ են հրատարակվել ինչպես հայ, այնպես էլ օտարազգի հեղինակների կողմից: Երիտթուրքերի գաղափարախոսության վրա Եվրոպայում 19-րդ դարի վերջին տարածված սոցիալ-փիլիսոփայական և քաղաքական գաղափարների ազդեցությունները համեմատաբար քիչ ուսումնասիրված ուղղություն է և ողջունելի է, որ ներկայացվող ատենախոսության շրջանակներում փորձ է կատարվում համաշխարհային պատմության կտրվածքով դիտարկել Եվրոպայում տարածում գտած այդ գաղափարների ազդեցությունը Օսմանյան կայսրությունում իշխանության եկած և Հայոց ցեղասպանությունը ծրագրած ու իրագործած երիտթուրքերի պանթուրքիստական գաղափարախոսության վրա: Ռ. Գալուստյանի թեման խիստ արդիական է նաև մեր օրերում, քանի որ համաթուրքական գաղափարներն այսօր էլ ընկած են Թուրքիայի, ինչպես նաև նրա դաշնակից Ադրբեջանի արտաքին քաղաքականության հիմքում: Դրա վառ դրսևորումները եղան 2020 թ. 44-օրյա պատերազմի ընթացքում թուրք-

ադրբեջանական տանդեմի սերտ գործակցությունը Արցախի դեմ սանձազերծված ագրեսիայի ժամանակ, ինչպես նաև բռնազավթված Շուշիում թուրք-ադրբեջանական հռչակագրի ստորագրումը, որոնք ակնհայտորեն ուղղված էին ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի ու ողջ հայ ժողովրդի դեմ: Այսօր էլ թուրքական երկու պետությունների կողմից Հայաստանին ներկայացվող այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքի» տրամադրման պահանջը նույնպես տեղավորվում է նոր համաթուրքականության տրամաբանության մեջ: Վերջերս Թուրքիայի գլխավորությամբ Թյուրքալեզու պետությունների համագործակցության խորհրդի հաճախակի դարձած խորհրդաժողովների անցկացումը նույնպես այդ մասին է վկայում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլխից՝ երեքական ենթագլխով, եզրակացությունից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից՝ ընդամենը 188 տպագիր էջ:

Աշխատության ներածության մեջ հեղինակը ներկայացնում է ատենախոսության նպատակը և խնդիրները, հիմնավորում է թեմայի արդիականությունը, ներկայացնում գիտական նորույթն ու գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ ««Միություն և առաջադիմություն» կոմիտեի կառուցվածքը և գաղափարները» գլխում նախ տրվում է 19-րդ դարի եվրոպական սոցիալ-փիլիսոփայական մտքի ուրվագիծը, այնուհետև ներկայացվում է այդ գաղափարների ներթափանցումը Օսմանյան կայարություն և դրանց ազդեցությունը քաղաքական և մտավորական վերնախավի վրա: Առանձին ենթագլուխներով ներկայացվում են «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գործունեությունը և գաղափարների աստիճանական զարգացումը 1889-1902 և 1902-1913 թթ.:

Ատենախոսության երկրորդ՝ ««Միություն և առաջադիմություն» կոմիտեի գաղափարական առանձին տարրերը և Հայոց ցեղասպանությունը» գլուխը նվիրված է այն անձանց գործունեությանը, ում միջոցով երիտթուրքերը ծանոթացել են Եվրոպայում տարածում գտած սոցիալ-փիլիսոփայական ու քաղաքական գաղափարներին:

Ատենախոսության երրորդ՝ ««Միություն և առաջադիմություն» կոմիտեի ռասայական ազգայնականությունը և Հայոց ցեղասպանությունը» գլխում

ուսումնասիրվում է եվրոպական ռասիզմի ազդեցությունը «Միություն և առաջադիմություն» կոմիտեն գաղափարախոսության վրա և դրա դրսևորումը Հայոց ցեղասպանության իրականացման ընթացքում:

Հետազոտության հիմնական արդյունքները հանրագումարի են բերվել եզրակացություններ բաժնում:

Ուսումնասիրության համար աղբյուրագիտական հիմք են ծառայել սկզբնաղբյուրները, մամուլի նյութերը, ականատեսների, ցեղասպանությունը վերապրածների հուշագրությունները, համապատասխան մասնագիտական գրականությունը:

Կարևորելով ատենախոսի կողմից կատարված ինքնուրույն աշխատանքը, գնահատելով ներկայացված մոտեցումներն ու եզրակացությունները, այդուհանդերձ, պետք է նշենք, որ ատենախոսությունը զերծ չէ նաև թերություններից ու բացթողումներից, որոնց վրա հրավիրում ենք ատենախոսի ուշադրությունը.

1. Ատենախոսության վերնագիրը անհաջող է ձևակերպված, և ինչը թյուրընկալումների տեղիք է տալիս: Կարծում ենք, որ բովանդակությունից ելնելով, ատենախոսության վերնագիրը ավելի ճիշտ կլիներ ձևակերպել հետևյալ կերպ՝ «Եվրոպական սոցիալ-փիլիսոփայական և քաղաքական մտքի դերը «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գաղափարախոսության ձևավորման գործընթացում և դրա ազդեցությունը Հայոց ցեղասպանության իրականացման վրա»:
2. Թեմայի արդիականությունը հիմնավորելիս ատենախոսն անպայման պետք է անդրադառնար այն հարցին, թե Եվրոպայում տարածում գտած գաղափարները, որոնք ազդել էին «Միություն և առաջադիմություն» կուսակցության և նրա դավանած պանթյուրքիզմի վրա, որքանով են արդիական այսօր, օրինակ, Թուրքիայում և որքանով են դրանք սպառնում Հայաստանի և հայ ժողովրդի անվտանգությանն ու գոյությանը՝ հատկապես 2020 թ. 44-օրյա պատերազմից, Արցախի կորստից, հայաթափումից ու դրա հետևանքներից հետո:
3. Ատենախոսը աշխատանքի առաջին գլխում կարող էր համառոտ անդրադարձ կատարել նաև համիդյան կոտորածների իրականացման գաղափարական հենքին՝

ի ցույց դնելով ցեղասպանական այդ գործողությունների և հետագայում երիտթուրքերի ու քեմալականների կողմից այդ քաղաքականության շարունակությունը և հետագայում դրա էլ ավելի կատարելագործումը՝ հիմնվելով եվրոպական ռասիզմի գաղափարների վրա:

4. Ատենախոսության թեմային առնչվող բազմաբնույթ ուշագրավ նյութերի հարստացման առումով օգտակար կարող էր լինել նաև հետազոտողի ուշադրությունից վրիպած ներքոհիշյալ արժեքավոր աշխատությունը.

   Асланян А.Л., Младотурки перед национальной проблемой: от "либерал-реформизма", политики "братства и равенства" до махрового шовинизма и геноцида, Ереван, "Ван Арьян", 2010.

5. Ատենախոսի կողմից բացարձակապես շրջանցվել են երիտթուրքերի վրա մեծ ազդեցություն թողած և քննարկվող ժամանակաշրջանում Եվրոպայում լայն տարածում գտած մասոնական գաղափարները: Չպետք է մոռանալ, որ 1908 թ. նրանք Օսմանյան կայսրությունում իշխանության եկան հենց մասոնական «Եղբայրության, հավասարության» կարգախոսներով, ինչին հավատացին նաև ոչ թուրք ժողովուրդները, այդ թվում նաև որոշ հայ քաղաքական ուժեր:

6. Ցանկալի կլիներ, որ ատենախոսը ցույց տար, օրինակ, սոցիալ-դրվինիզմի գաղափարների ազդեցությունը Հայոց ցեղասպանության նախապատրաստական փուլում հայերի նկատմամբ իրականացվող վիկտիմիզացիայի գրոծընթացի վրա:

7. Աշխատանքը կշահեր, եթե ատենախոսության մեջ համեմատական վերլուծություն անցկացվեր երիտթուրքերի և նացիստների վրա 19-րդ դարի վերջում Եվրոպայում տարածված գաղափարների ազդեցությունների միջև:

8. Ատենախոսն աշխատանքի մեջ հավանաբար թուրքական իշխանությունների կողմից ընդունված այսպես կոչված «միլեթների» համակարգի ազդեցությամբ գործածում է «հայ համայնք» եզրույթը, ինչը թյուրընկալումների տեղիք կարող է տալ՝ ակամայից կասկածի դնելով հայերի տեղաբնիկ ժողովուրդ ու Արևմտյան Հայաստանի՝ հայ ժողովրդի հայրենիք լինելը: Այդ հանգամանքներից ելնելով, ճիշտ կլիներ, որ ատենախոսը պարզապես գործածեր «հայ բնակչություն» ձևակերպումը:

Որոշեցին՝ Ռեգինա Ալեքսանի Գալուստյանի «Եվրոպական մտքի դերը «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գաղափարախոսության ձևավորման գործընթացում և դրա ազդեցությունը Հայոց ցեղասպանության վրա» Է.00.02. «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է թվանիշին ու մասնագիտությանը, հեղինակի հրատարակած հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները: Արված դիտողությունները ընդհանուր առմամբ չեն ազդում կատարված աշխատանքի վրա, որը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին և հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Եզրակացությունը հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի 2024 թ. նոյեմբերի 5-ի նիստում (արձանագրություն թիվ 5):

ՀՀ ԳԱԱ ՊԻ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր **Ա. Ց. Մարուքյան**

Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության բաժնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ց. Մարուքյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ ՊԻ գիտքարտուղար, պ.գ.թ., դոցենտ **Հ. Ղ. Մուրադյան**